

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության
Ֆերմերային շուկաներ և համայնքային միջոցառումներ

Լոս Անջելես շրջանում դեպքերի աճի, այդ թվում՝ համայնքում ավելի մեծ տարածման և Հանրային առողջապահության Կալիֆոռնիայի վարչության կողմից վերջերս ներկայացրած ցուցումների պատճառով, որոնք վերաբերում են COVID-19-ին և հանրային հավաքներին, համայնքային միջոցառումներին, ներառյալ՝ այն դեպքերը, որոնք գործում են որպես Սերտիֆիկացված ֆերմերային շուկայի մաս, պետք է չեղարկվեն կամ տեղափոխվեն 2020թ.-ի Ապրիլի 20-ից հետո և չպետք է ստանան գործելու առողջապահական թույլտվություն: Համայնքային միջոցառումները, որոնք նախկինում հաստատվել ու թույլատրվել են, տեղեկացվել են, որ թույլտվությունը կասեցվել է, և նրանց կտրվի միջոցառումը վերապահավորելու կամ վճարված վճարների փոխհատուցում պահանջելու հնարավորություն:

Հաշվի առնելով բնակիչների համար թարմ սնունդի ապահովման անհրաժեշտությունը՝ բացօթյա Սերտիֆիկացված ֆերմերային շուկաներին (ՍՖՇ), որոնք սերտիֆիկացվել են Կալիֆոռնիա Նահանգի կողմից և ձեռք են բերել Սերտիֆիկացված ֆերմերային շուկայի համար նախատեսված թույլտվություն, կթույլատրվի գործել, եթե պահպանվեն ստորև նշված պայմանները:

Սերտիֆիկացված ֆերմերային շուկաների աշխատանքի փոփոխված պայմաններ.

- Սահմանափակեք սննդամթերքների վաճառքը ամբողջական չկտրված արտադրատեսակների և փաթեթավորված սննդային ապրանքների, որոնք համապատասխանում են Սննդի և գյուղատնտեսության Կալիֆոռնիայի վարչության պահանջներին: <https://www.cdfa.ca.gov/is/i & c/cfm.html>
- Համայնքային միջոցառումները և ՍՖՇ-ի հետ կապված սննդի բոլոր ժամանակավոր օբյեկտները պետք է դադարեցնեն գործունեությունը:
- Փաթեթավորված ուտելիքի նմուշառում չի թույլատրվում:
- Փակցրեք նշաններ, որոնք հաճախորդներին կհիշեցնեն հետևյալը՝
 - Սպառումից առաջ լվացեք բոլոր արտադրատեսակները:
 - Հիշեցում ձեռքերի լվացման մասին
<http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/GuidanceHandwashingEnglish.pdf>
 - Հաճախորդներին խնդրել հիվանդ ժամանակ մնալ տանը նույնիսկ թեթև հիվանդության դեպքում:
<http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/StayHome.pdf>
- Շուկայի կառավարիչները պատասխանատու են հաճախորդների սոցիալական հեռավորությունն ապահովելու հնարավորությունը վերահսկելու համար:
 - Արտադրանքների կրպակների միջև պահպանել հեռավորություն:
 - Առաջարկել նշանակել աշխատակից, ով կհամոզվի, որ ՍՖՇ մտնել սպասողները պահպանում են սոցիալական հեռավորության պահանջները և գնումներ են կատարում շուկայի վաճառողից շուկայի ներսում:
- Որտեղ հնարավոր է, ապահովել ձեռքերի լվացման միջոցներով: Առաջարկել ապահովել առնվազն 60% սպիրտային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոցներ, որոնք հաճախորդները պետք է օգտագործեն ապրանքների հետ գործ ունենալուց առաջ: Առաջարկել հատակի մակերեսին օգտագործել ժապավեն, որպեսզի հաճախորդների միջև համապատասխան հեռավորություն պահպանվի:
- Համոզվել, որ ձեռքերի լվացման միջոցները տրամադրվում են սանհանգուցային

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության Ֆերմերային շուկաներ և համայնքային միջոցառումներ

օբյեկտներին կից և զինված են օճառով ու թղթ սրբիչներով ցանկացած ժամանակ:

Սերտիֆիկացված ֆերմերային շուկայի աշխատակիցների համար.

- Հիվանդ աշխատակիցներին խորհուրդ է տրվում մնալ տանը և աշխատանքի չվերադառնալ վերականգնումից հետո մինչև առնվազն 3 օր (72 ժամ), ինչը նշանակում է, որ ջերմության հարցը լուծվել է առանց ջերմիջեցնող դեղորայքի, իսկ շնչառական ախտանիշները (օրինակ՝ հագ, շնչարգելություն) բարելավվել են, **ԵՎ** առաջին ախտանիշների հայտնվելուց հետո առնվազն 7 օր անցել է: Եթե պարզվում է, որ աշխատակիցները հիվանդ են աշխատանքի ժամանակուց հետո կամ հիվանդացել են օրվա ընթացքում, ապա նրանք պետք է անմիջապես տուն ուղարկվեն:
- Հիվանդ աշխատակիցների հետ սերտ շփում ունեցած ցանկացած անձ աշխատակցի հետ վերջին շփումից հետո պետք է 14 օր կարանտինի մեջ մնա: Սերտ շփում ունեցող անձինք ներառում են ընտանիքի բոլոր անդամներին, ցանկացած ինտիմ կոնտակտավոր անձի և բոլոր այն անհատներին, ովքեր աշխատակցի հետ 10 րոպեից ավելի տևողությամբ գտնվել են 6 ոտնաչափից փոքր հեռավորության վրա, ախտանիշների հայտնվելուց 48 ժամ առաջ մինչև մեկուսացման ժամանակահատվածի ավարտը: Բացի այդ, ցանկացած անձ, ով շփում է ունեցել հիվանդի մարմնի հեղուկների և/կամ արտադրությունների (օրինակ՝ հիվանդը հագացել/փռշտացել է նրա վրա, համատեղ օգտագործել են որևէ պարագաներ, դիպել է հիվանդի թքին կամ խնամել է հիվանդ աշխատակցին առանց պաշտպանիչ հանդերձանք կրելու), պետք է լինի կարանտինի մեջ:

Ձեռքերի լվացման ցուցումներ շուկայի բոլոր աշխատակիցների համար

- Լվանալ ձեռքերը և թևերը օճառով և գոլ ջրով առնվազն 20 վայրկյան նախքան՝
 - ուտելը կամ խմելը
 - ձեռնոցները հագնելը
- Լվանալ ձեռքերը հետևյալ գործողություններից հետո.
 - գուլգարանից օգտվելը
 - մազերին, դեմքին, մարմնին կամ հագուստին դիպչելը
 - փռշտալը, հագալը կամ անձեռոցիկ օգտագործելը
 - ծխելը, ուտելը, խմելը կամ մաստակ ծամելը
 - դատարկել կամ դուրս հանել աղբը
 - կանխիկ գումարի հետ առնչվելը
 - ձեռնոցները հանելը
 - այլ գործողություններ կատարելը, որոնք կարող են աղտոտել ձեռքերը
- Խորհուրդ է տրվում ամեն հերթափոխի համար ունենալ աշխատակից, որը պատասխանատու կլինի ձեռքերի լվացման կետերը օճառով և թղթ սրբիչներով ապահովելու համար:
- Խորհուրդ է տրվում օգտագործել ձեռնոցներ՝ որպես լրացուցիչ միջոց, բայց կարևոր է հիշել, որ ձեռնոցները չեն փոխարինում ձեռքերը լվանալու անհրաժեշտությանը և ձեռքերի հիգիենայի պահպանմանը:

Ընդհանուր մաքրման աշխատանքներ

- Մաքրել և ախտահանել բոլոր «հաճախակի հպվող» մակերեսները, ինչպիսիք են սեղանները, դրամարկղի սեղանները, գուլգարանների հարմարանքները, ձեռքի լվացարանները և

Նոր կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության Ֆերմերային շուկաներ և համայնքային միջոցառումներ

աղբարկղերը:

- Օգտագործել Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալության (ՇՄՊԳ) կողմից գրանցված միջոց, որը մաքրում է (հեռացնում է մանրէները) և ախտահանում է (սպանում է մանրէները): Միշտ հետևել մաքրող և ախտահանող միջոցների պիտակների վրա նշված ցուցումներին:

Արդյունավետ ախտահանիչներ

- Զլորային լուծույթ պատրաստելու համար խառնել 4 թեյի գդալ քլոր և 4 բաժակ ջուր: Ավելի մեծ քանակություն պատրաստելու համար խառնել 1/3 բաժակ քլորը 1 գալլոն (16 բաժակ ջրի) հետ: Օգտագործել խառնուրդը 20 րոպեի ընթացքում: Զլորային լուծույթը ստուգելու համար օգտագործել թեստային ձողիկներ (100 ppm):
- ՇՄՊԳ-ի կողմից հաստատված այլ ախտահանիչները կարող են օգտագործվել, եթե դրանք արդյունավետ են կորոնավիրուսների դեմ: Հաճախորդը կարող է զանգահարել ապրանքի պիտակի վրայի 1-800 հեռախոսահամարով՝ ճշտելու համար դրա արդյունավետությունը COVID-19-ի դեմ:

Ախտահանիչների, իրերի և աղբի հետ ճիշտ աշխատանք

- Քիմիական նյութերը օգտագործել միայն լավ օդափոխվող վայրերում:
- Խուսափել անհամատեղելի քիմիական նյութերը իրար խառնելուց (կարդացեք պիտակները):
- Կանխել քիմիական նյութերի շփումը մթերքի հետ մաքրման աշխատանքների ընթացքում:
- Աղբը հավաքել զգուշությամբ և թափել համապատասխան աղբամանի մեջ:

Շուկայի մենեջերները պատասխանատու են վերոնշյալ պայմանների ապահովման համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապ հաստատել Տեղեկատու հեռախոսահամարով (888) 700-9995:

Covid-19 մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <http://publichealth.lacounty.gov> կայքը կամ զանգահարեք Լոս Անջելես շրջանի տեղեկատու՝ 2-1-1 շուրջօրյա հեռախոսահամարով: